ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 334-Ա
30 հունիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 04-Ի ԹԻՎ 182-Ա , ԹԻՎ 194-Ա , ԹԻՎ 195-Ա ԵՎ ԹԻՎ 218-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի գնումների համակարգող Կարեն Նալբանդյանի կողմից 2022 թվականի հունիսի 28-ին ներկայացված զեկուցագիրը. ***որոշում եմ՝***

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 4-ի <<Պատասխանատու ստորաբաժանման և գնումների համակարգող սահմանելու մասին>> թիվ 182-Ա, թիվ 194-Ա, թիվ 195-Ա և 2022 թվականի մայիսի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 4-ի թիվ 182-Ա որոշումը նոր խմբագրությամբ շարադրելու մասին>> թիվ 218-Ա որոշումները:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Գևորգյան**

2022 թվականի հունիսի 30
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 335-Ա

30 հունիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՅԱՆԵ ՍՈԿՐԱՏԻ ՄԱԴԱԹՅԱՆԻՆ, ՍԵԴԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱԴԱԹՅԱՆԻՆ, ԿԱՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱԴԱԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի, 29-րդ կետերի 3-րդ ենթակետի դրույթներով, և հիմք ընդունելով Կարեն Սերյոժայի Մադաթյանի դիմումը. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում գտնվող Գայանե Սոկրատի Մադաթյանին, Սեդա Սերյոժայի Մադաթյանին, Կարեն Սերյոժայի Մադաթյանին /կադաստրային ծածկագիր 08-100-040-003/ (վկայական N՝ 1334113) պատկանող բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր, 1-ին փողոց, թիվ 58 բնակելի տուն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա. Գևորգյան**

2022 թվականի հունիսի 30
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 336-Ա

30 հունիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ 31/1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 118-Ն որոշումը. *որոշում եմ՝*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2022 թվականի բյուջեի եռամսյակային համամասնությունները սահմանելու մասին» թիվ 31/1 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 04, Խումբ 05, Դաս 01 «Ճանապարհային տրանսպորտ» տողի «երկրորդ եռամսյակ» սյունակում գրառված «114362.0» թիվը փոխարինել «113183.0» թվով, «ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Հատուկ նպատակային նյութեր» 4269 հոդվածի երկրորդ եռամսյակում գրառված «5000.0» թիվը փոխարինել «3821.0» թվով:

2.Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 10, Խումբ 07, Դաս 01 «Սոցիալական հատուկ արտոնություններ«այլ դասերին չպատկանող»» տողի «երկրորդ եռամսյակ» սյունակում գրառված «8800.0» թիվը փոխարինել «5800.0» թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածի երկրորդ եռամսյակում գրառված «7000.0» թիվը փոխարինել «4000.0» թվով:

3. Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 09, Խումբ 01, Դաս 01 «Նախադպրոցական կրթություն» տողի «երկրորդ եռամսյակ» սյունակում

գրառված «77500.0» թիվը փոխարինել «80708.0» թվով, «ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական «համայնքային» կազմակերպություններին» 4511 հոդվածի երկրորդ եռամսյակում գրառված «38000.0» թիվը փոխարինել «41208.0» թվով:

4.Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 08, Խումբ 02, Դաս 01 «Գրադարանի պահպանման ծախսեր» տողի «երկրորդ եռամսյակ» սյունակում գրառված «6576.0» թիվը փոխարինել «7081.0» թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածի երկրորդ եռամսյակում գրառված «6000.0» թիվը փոխարինել «6505.0» թվով:

5.Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 05, Խումբ 01, Դաս 01 «Աղբահանում» տողի «երկրորդ եռամսյակ» սյունակում գրառված «19340.0» թիվը փոխարինել «19746.0» թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածի երկրորդ եռամսյակում գրառված «9000.0» թիվը փոխարինել «9406.0» թվով:

6.Ծախսերի գործառնական դասակարգման Բաժին 06, Խումբ 03, Դաս 01 «Ջրամատակարարում» տողի «երկրորդ եռամսյակ» սյունակում գրառված «32000.0» թիվը փոխարինել «32060.0» թվով, ինչպես նաև ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածի երկրորդ եռամսյակում գրառված «14000.0» թիվը փոխարինել «14060.0» թվով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի հունիսի 30
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 337-Ա

01 հուլիսի 2022 թվական

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԱՐԿԱԴԻ ՍԱՄՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ԱՆԺԵԼԱ ԱՇՈՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 248-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ, 37-րդ հոդվածի 2-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 30.06.2022 թվականի N Կ-30062022-08-0120 որոշումը՝ գույքի նկատմամբ իրավունքների (սահմանափակումների) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին, հաշվի առնելով քաղաքացիներ՝ Արկադի Սամվելի Պետրոսյանին (ծնված 28 օգոստոսի 1981 թվականին, անձնագիր N AP0606303, տրված 21.10.2016 թվականին), Անժելա Աշոտի Խաչատրյանին (ծնված 03 մարտի 1987 թվականին, անձնագիր N AS0362881, տրված 06.09.2018 թվականին), ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի օժանդակ և հասարակական նշանակության շինությունները օրինական ճանաչելու վերաբերյալ քաղաքացիների 2022 թվականի մայիսի 11 -ի համատեղ դիմումը, ***որոշում եմ՝***

1. Հաշվի առնելով, որ քաղաքացիներ՝ Արկադի Սամվելի Պետրոսյանին /ծնված 28 օգոստոսի 1981 թվականին, անձնագիր N AP0606303, տրված 21.10.2016 թվականին/, Անժելա Աշոտի Խաչատրյանին /ծնված 03 մարտի 1987 թվականին, անձնագիր N AS0362881, տրված 06.09.2018 թվականին/, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 1 հասցեում գտնվող 08-022-0007-0022 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.192 հեկտար մակերեսով հողամասում (վկայական 2601923, տրված՝ 18.09.2010 թվական) 2012-2019

թվականներին ինքնակամ կառուցված 251.51 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունները (ավտոտնակ-84.16 քառակուսի մետր, օժանդակ շինություն-52.05, շվաքարան-19.69, անասնագոմ-95.40, պարիսպ-0.21 քառակուսի մետր) և 86.4 քառակուսի մետր մակերեսով հասարակական նշանակության առևտրի և սպասարկման օբյեկտը (հետագայում՝ շինություններ) բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունները ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինությունների և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում է սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

1) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

4) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

5) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

1) բնակելի օժանդակ շինությունները (ավտոտնակ-84.16 քառակուսի մետր, օժանդակ շինություն-52.05, շվաքարան-19.69, անասնագոմ-95.40, պարիսպ-0.21 քառակուսի մետր), որոնց ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է **251.51** քառակուսի մետր, որպես բնակելի նշանակության օժանդակ կառույցներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի համար սահմանված շինության **0.0536** գործակցի կիրառմամբ, վճարի չափը կազմում է՝

251.51 քառակուսի մետր X 6000 դրամ X 0.0536 = 80886 (ութսուն հազար ութ հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

2) առևտրի և սպասարկման օբյեկտի շինությունը, որի արտաքին մակերեսը կազմում է **86.4** քառակուսի մետր, որպես հասարակական նշանակության կառույց, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 16-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի համար սահմանված շինության **0.0536** գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

86.4 քառակուսի մետր X 20 000 դրամ X 0.0536 = 92621 (իննսուներկու հազար վեց հարյուր քսանմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3) Ինքնակամ շինությունների օրինականացման համար վճարի չափը սահմանվում է **173507 (մեկ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր յոթ) Հայաստանի Հանրապետության դրամ**, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի համապատասխան հաշվեհամարին:

4) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բյուջեի 900495101447 պետք է վճարի օրինականացման համար սահմանված վճարները, չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Պարտավորեցնել հողամասի համասեփականատերեր՝ Արկադի Սամվելի Պետրոսյանին և Անժելա Աշոտի Խաչատրյանին սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

6. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 23-ի «Քաղաքացիներ՝ Արկադի Սամվելի Պետրոսյանին, Անժելա Աշոտի Խաչատրյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի օժանդակ և հասարակական նշանակության շինությունները օրինական ճանաչելու մասին» N 248-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ **Ա.Գևորգյան**

2022 թվականի հուլիսի 01
քաղաք Մարալիկ